Արեստակես Ս. Սիմավորյան[1]

«Քըզըլ էլմա» առասպելը որպես Անկարայի նվաճողական քաղաքականության ուղեցույց

Փորձագետի տեսակետ, 27.07.2026 թ.[2]

Սեղմագիր

Հոդվածում հեղինակը համառոտ վերլուծում է թուրքական պաշտոնական խոսույթում արմատավորված «Քըզըլ էլմա» («Կարմիր խնձոր») ուտոպիստական հայեցակարգի զարգացումը: Վերլուծվում է, թե ինչպես է հնագույն խորհրդանիշն արհեստականորեն համարկվել ժամանակակից պետական քարոզչությանը, որն Անկարայի համար ծառայում է իբրև գաղափարական հովանոց արտաքին էքսպանսիայի, ռազմարդյունաբերական համալիրի բրենդավորման և տարածաշրջանային հավակնությունների համար: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև այդ գաղափարաբանության վերափոխմանը պանթյուրքական քաղաքականության հարթությունում, որտեղ հայկական Արցախի նկատմամբ ոտնձգությունները և ՀՀ սուվերեն տարածքների նկատմամբ հավակնությունները ներկայացվում են «Կարմիր խնձորի» իրականացման հերթական հանգրվան:

Բանալի բառեր: *«Կարմիր խնձոր», Քըզըլ էլմա, Թուրքիա, գաղափարախոսություն, էքսպանսիա, Արցախ, Սյունիք:*

Առաջաբան

Միջազգային հարաբերությունների արդի փոխակերպումը փաստում է՝ պետությունների արտաքին քաղաքականությունը չի ձևավորվում բացառապես տնտեսական կամ ռազմական ռեսուրսների չոր հաշվարկներով: Բազմաբևեռ աշխարհակարգի անցման շրջանում առաջնագիծ են նետվում այնպիսի մետապատումներ (որոշ դեպքերում դրանք սինթեզված են կրոնական պատկերացումներից) ու քաղաքական միֆեր, որոնցով պետությունները փորձում են իրականացնել ներհասարակական համախմբման և արտաքին նվաճումների «օրինականացման» ուղղված քայլեր: Այդ նպատակով ծավալապաշտական կամ ինքնիշխանության ձգտող քաղաքական ցանկացած համակարգ առաջնորդվում է իր գաղափարական ուղեցույցով՝ տեսլականով, որով իր սահմաններից դուրս ազդեցության տարածումն ուղեկցվում է իբրև «*պատմական անխուսափելիությամբ*» կամ կեղծ «*մեսիականությամբ*»:

---

[1] Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014–2021 թթ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019–2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում որպես ավագ փորձագետ: 2021–2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածների և 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

[2] Հոդվածը խմբագրություն է փոխանցվել 25.07.2026 թ.-ին:

Այսպիսի գաղափարախոսությունները հանրության հավաքական գիտակցության վրա ազդելու և աշխարհաքաղաքական նոր սահմաններ գծելու հզոր մեխանիզմներ են: Գլոբալ մակարդակում տարբեր շեշտադրումներով և նպատակադրումներով առկա են բազմաթիվ գաղափարախոսական հայեցակարգեր, որոնք ձևավորում են ժամանակակից միջազգային հարաբերությունները և ուղղորդում տարածաշրջանային խաղացողների ռազմավարական նկրտումները: Իսկ այդ համատեքստում, թուրքական քաղաքական և քաղաքագիտական-ռազմավարական մտածողությունում արմատացած «**Kizil Elma**» (թուրք. նշանակում է *«կարմիր խնձոր»*) նման ուռճացված առասպելը ծառայում է հեգեմոնիայի և տարածաշրջանային վերածնումների գաղափարական հիմք, որի ուղղակի թիրախում հայտնվում են հարևան պետությունների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը:

«Կարմիր խնձոր» ուտոպիստական գաղափարի հիմքերն ու նշանակությունը. համառոտ ակնարկ

Ըստ որոշ թուրք հետազոտողների՝ այս հասկացության պատմական ակունքները հասնում են մինչև հին ժամանակներ՝ սնուցված լինելով նախաիսլամական համոզմունքներով և Կենտրոնական Ասիայի թյուրքական ցեղերի քոչվորական ավանդույթներով: Թյուրքական ցեղերի կոլեկտիվ ենթագիտակցության մեջ, խնձորի պատկերն, իբրև թե, ձևավորվել է որպես **բաղձալի նպատակի**, **հեռավոր նպատակակետի** կամ **գերագույն ուժի** սակրալ խորհրդանիշ, որին պետք է ձգտեն կառավարիչը և նրա բանակը:

Չնայած այս շրջանառվող տեսակետներին՝ բուն արտահայտությունը թուրքական ակադեմիական հրատարակություններից ոմանցում ներկայացված է իբրև անորոշ ծագումն ունեցող: Օրինակ՝ Մ. Զ. Փաքալընը, մեջբերելով 16-17 դդ. բոսնիական ծագմամբ օսմանցի պատմաբան և ժամանակագիր Մեհմեթ Փեչևիի հետևյալ խոսքերը՝ «*Ժողովրդի մեջ տարածված է, որ մուսուլմանները պետք է նվաճեն մինչև Քըզըլ էլմա: Սակայն այս բառի աղբյուրն ու պատճառն անհայտ են*», նշում է, որ «*Քըզըլ էլմա*»-ն ինչ-որ երևակայական բան չէ, այլ ըստ Փեչևիի՝ «*սահմանաքարի նման նշան*»[3]:

Ինչևէ, իսլամի ընդունմամբ այս առասպելը փոխակերպվում է՝ միահյուսվելով «İla-yi Kelimetullah» (Աստծո խոսքի փառաբանում) կրոնական և քաղաքական վարդապետությանը՝ դառնալով նոր ռազմական արշավների և «Nizam-i Âlem»-ի (համաշխարհային կարգ) հաստատելու գաղափարական շարժիչ ուժը: Այս գործընթացի վառ օրինակներից էր Սուրբ Սոֆիայի առջև Հուստինիանոսի ձիավոր արձանի մոտ պահվող բրոնզե գնդի ընկալումը՝ որպես «*Կարմիր խնձորի*» նյութական մարմնացում, որը ոգեշնչել է սուլթան Մեհմեդ II-ի

[3] Տես նաև, Pakalın, M. Z. (1983). Osmanlı Tarih Deyimleri ve Terimleri Sözlüğü. Cilt 2. İstanbul: MEB Devlet Kitapları. s. 278, https://ru.scribd.com/document/98653543/OSMANLI-TARİH-DEYİMLERİ-VE-TERİMLERİ-SOZLUĞU-2-Cilt-1-kısım-Mehmet-Zeki-Pakalın-Milli-Eğitim-Basımevi-İstanbul-1971-II-Baskı (բեռնման օրը՝ 15.07.2026).

(Ֆաթիհի) զորքերին գրավել Կոստանդնուպոլիսը[4]: Բյուզանդական մայրաքաղաքի անկումից հետո կայսերական մտքի վեկտորը անմիջապես տեղափոխվում է դեպի արևմուտք, և Հռոմը՝ իր Սուրբ Պետրոսի տաճարով, դառնում է օսմանյան կառավարիչների սրբազան ցանկության, նվաճման նոր օբյեկտը, որը փաստորեն ընկալվում էր իբրև *«բարձրագույն աստվածային հրամանագրի կատարում»*:

17-րդ դարի օսմանյան գրող, ճանապարհորդ Էվլիյա Չելեբին նաև հիշատակել է Վիեննա, Բուդա, Էսթերգոմ, Բելգրադ քաղաքներն ու դրանց ամրոցները՝ *«Կարմիր խնձոր»* գաղափարի համատեքստում[5]: Այս բոլոր վայրերը դարձան օսմանյան նվաճման իդեալի կարևոր թիրախներ՝ կա՛մ գրավվեցին շատ դժվար պայքարներից հետո, կա՛մ մնացին որպես մեծ նպատակներ, ինչպես Հռոմն և Վիեննան:

1826 թ. Ենիչերիների կորպուսի լուծարումից հետ, երբ թուլացող Օսմանյան կայսրությունը հայտնվեց խորը համակարգային ճգնաժամի մեջ, հասկացությունը երկար ժամանակով դուրս մղվեց քաղաքական օրակարգից: Սակայն 19-րդ դարավերջին և 20-րդ դարի սահմանագծին կայսրության փլուզման, թուրքական ազգայնամոլական և ռասիստական տրամադրությունների աճի հետնապատկերում պանթյուրքիզմի և պանթուրանիզմի գաղափարախոս Զիյա Գյոքալփը վերակենդանացրեց և վերաիմաստավորեց առասպելը՝ այն ներկայացնելով որպես «*հայրենիքի՝ Թուրանի հետ վերամիավորման համաթյուրքական ձգտում*»:

Տվյալ ժամանակաշրջանում *«Կարմիր խնձորի»* հայեցակարգի վերածնունդը Արևմուտքում կայսրության կրած պարտությունների փոխհատուցման փորձի դրսևորումն էր՝ Եվրասիայի թյուրքական ժողովուրդների լայնածավալ էթնիկ և մշակութային համախմբման նախագծերով: Կարճ ասած, «*Օսմանյան կայսրության անկման շրջանում և Հանրապետական Թուրքիայի ձևավորմանը զուգընթաց՝ այս հայեցակարգը համալրվեց նաև թուրանականությամբ և թյուրքական համընդհանուր միության գաղափարներով՝ թևակոխելով զարգացման նոր փուլ՝ որպես «Թյուրքական աշխարհակալության վսեմ իդեալ» և «Թյուրք-իսլամական գաղափարախոսություն»*[6]:

Համանման գաղափարներ այլ ազգերի մոտ

Մինչ թուրքական *«Կարմիր խնձորը»* պատմության ընթացքում ստացել է հիմնականում ընդգծված քաղաքական, ռազմական և նվաճողական ուղղվածության իմաստ, աշխարհի այլ մշակույթներում «խնձորի» կամ նմանատիպ առարկաների խորհրդանիշը, իր

[4] Beytullah Çakır. Ütopya'dan Kızıl Elma'ya. *Lacivert Dergi*. SAYI:29, Kasım 2016, https://www.lacivertdergi.com/dosya/2016/11/02/utopyadan-kizil-elmaya (բեռնման օրը՝ 15.07.2026).

[5] Alp, A. (2023). Ziya Gökalp'a Göre Kızılelma ve Ceditçilik Hareketi. Gazi Akademik Bakış, 17(33), 45-59. https://doi.org/10.19060/gav.1405839 (բեռնման օրը՝ 15.07.2026).

[6] Armağan, B. (2022). Kolektif Bilinç Ürünü Olarak Kızılelma'nın Edebî Metinlerdeki Algılanma Görüntüsü: Ziya Gökalp'inve Cengiz Aytmatov'un Kızıl Elma Anlatıları. Korkut Ata Türkiyat Araştırmaları Dergisi, 8, 642.

արտացոլումն է գտել տարբեր ժողովուրդների հեքիաթներում որպես երկարակեցություն և առողջություն պարգևող սիմվոլ, իսկ քրիստոնեությունից՝ *«մեղքի համն առնելու»* պտուղ:

Սակայն նկատենք, որ միջնադարյան քրիստոնեա Եվրոպայում՝ *«Reichsapfel»*-ը, որը գերմաներենից թարգմանաբար նշանակում է *«Կայսերական խնձոր»*, ի հայտ է եկել դեռևս 12-րդ դարի Գերմանիայի թագավոր և Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ Ի-ի գահակալության ժամանակ, որը հայտնի է նաև որպես Ֆրիդրիխ Բարբարոսա՝ Ֆրիդրիխ Կարմամորուս (շիկամորուս): *«Ռեյխսապֆելը»* գլոբուս է՝ վերևում խաչով, որը խորհրդանշում է ամբողջ Եվրոպայի միավորումը գերմանական տիրապետության ներքո: Խորհրդանիշն օգտագործվել է համընդհանուր քրիստոնեական կրոնի կամ կայսեր քրիստոնեա հավատքին պատկանելու և կայսրության ուժը ներկայացնելու համար: Եթե ավելի հեռուն գնանք, ապա դրա պատկերի օգտագործումը թվագրվում է 4-րդ դարի վերջից մինչև 5-րդ դարի սկիզբ Արևելյան Հռոմեական կայսրեր՝ Արկադիոսի և նրա որդու՝ Թեոդոսիոս Բ Կրտսերի հատած դրամների վրա: Իսկ ընդհանուր առմամբ, Արևմտյան պատկերագրության մեջ գունդը խորհրդանշում է Քրիստոսի (Խաչի) տիրապետությունը աշխարհի (գլոբուսի) վրա, որը բառացիորեն պահվում է երկրային կառավարչի (կամ երբեմն՝ երկնային էակի, օրինակ՝ հրեշտակի) կողմից: Երբ այն պահվում է Քրիստոսի կողմից՝ պատկերը կոչվում է *«Salvator Mundi»* (Աշխարհի Փրկիչ): Բայց խորքային և նախնական իմաստով՝ հեթանոսական շրջանում, հատկապես հռոմեական դիցաբանության մեջ, գունդը խորհրդանշում էր տիեզերքը՝ որպես կայսեր տիրապետության խորհրդանիշ, և միայն հետո կերպափոխման արդյունքում ստացավ այն իմաստը՝ որով հայտնի է այսօր[7]:

Համանման առասպել գոյություն ունի նաև հույների մոտ: Օրինակ՝ հունական բանահյուսության համաձայն՝ *«Կարմիր խնձորենին»* (Kokkini Milia) մի առասպելական վայր է, որտեղից կվտարվեն թուրքերը, երբ *«Մարմարե Արքան»* (նկատի է առնվում Բյուզանդիայի վերջին կայսր Կոստանդին XI Պալեոլոգոսը, ով զոհվել է Կոստանդնուպոլիսը պաշտպանելու ժամանակ) վերադառնա կյանքի[8]:

Այսպիսով, օսմանյան/թուրքական «Կարմիր խնձորի»՝ համաշխարհային տիրապետության հասնելու միֆի ձևավորման վրա մեծապես ազդել են քրիստոնեական աշխարհի (բյուզանդական, հունական և եվրոպական) վախճանաբանական պատկերացումները՝ կապված էսխատոլոգիական ժամանակների մասին ընկալումների հետ: Կարծում ենք, որ վերածվելով կայսրության, այն ստիպված էր փոխառել այնպիսի գաղափարական տարրեր և սիմվոլներ, որոնք հասկանալի և տպավորիչ պետք է լինեին ոչ միայն իրենց, այլև նվաճված քրիստոնեա բնակչության ու արևմտյան հարևանների համար:

---

[7] Pyrgies, Joanna (2021). Globus cruciger' in the Hands of Monarchs. *Archaotravel.eu,* https://archaeotravel.eu/globus-cruciger-in-the-hands-of-monarchs/ (բեռնման օրը՝ 15.07.2026).

[8] Greek Legend: The “Marbled King”, Hagia Sophia and the Red Apple Tree. *Keep Talking Greece,* 24.07.2020, https://www.keeptalkinggreece.com/2020/07/24/hagia-sophia-marbled-king-red-apple-tree-legend-byzantine/ (բեռնման օրը՝ 15.07.2026).

Գուցե տեղի է ունեցել առասպելների փոխանակում կամ նույնիսկ հակադարձ իմաստով յուրացում թուրքերի կողմից. այն ինչ հույների համար ազատագրման կամ կորսված պետականության վերադարձի խորհրդանիշ էր, թուրքերի մոտ նվաճման հերթական հեռավոր հանգրվանը: Ընդ որում, այն երբեք ամուր կերպով հաստատված չէ որևէ աշխարհագրական կոորդինատի հետ: Փոխարենը, հենց որ թուրքերը մեկ *«խնձորի»* էին հասնում, գերագույն նպատակի հորիզոնը անպայմանորեն նահանջում էր աշխարհաքաղաքական մրցակցության հաջորդ խոշոր կենտրոն՝ այն դարձնելով պետության նվաճողական հավակնությունների տևական հետագիծ:

Հայեցակարգի արդի դրսևորումները Թուրքիայում

Ժամանակակից Թուրքիայում *«Կարմիր խնձոր»* հասկացությունը, վստահորեն կարելի է ասել աննախադեպ վերածնունդ է ապրում: Իշխող քաղաքական վերնախավն այս խորհրդանիշը նպատակաուղղված կերպով ներարկել է հանրային գիտակցության մեջ՝ դրա համար կիրառելով բազմաշերտ մոտեցումներ: Արտաքին քաղաքական ճակատում ունեցած հաջողությունների ցուցադրումը, ռազմարդյունաբերական համալիրի տեխնոլոգիական ձեռքբերումներին սակրալ-պատմական երանգավորում տալը (ինչի վառ ապացույցն է *«Բայրաքթար Քըզըլ Էլմա»* հարվածային ԱԹՍ-ի ցուցադրական անվանակոչումը) և համաշխարհային առաջնորդությանը հավակնող հայեցակարգերի շրջանառումը ծառայում են մեկ հիմնական նպատակի՝ էքսպանսիոնիստական տեսլականը դարձնել հասարակության համար անվերապահ ընդունելի ազգային-պետական ուղենիշ:

Դրա վերածննդի և արդիականացման գլխավոր խթան հանդիսացավ ԽՍՀՄ փլուզումը, որն Անկարայի համար եզակի աշխարհաքաղաքական հնարավորությունների պատուհան բացեց հետխորհրդային տարածքում: Կովկասում և Կենտրոնական Ասիայում անկախ թյուրքալեզու պետությունների ի հայտ գալով՝ թուրք ռազմավարագետները վերանայեցին հին պանթյուրքիստական երազանքները բազմավեկտոր ինտեգրման համատեքստում, որի գագաթնակետը՝ «Թյուրքական պետությունների կազմակերպության» ստեղծումն էր:

«Կարմիր խնձորը» դադարեց ընկալվել սոսկ տարածքների զավթման համատեքստում: Այն վերածվեց ռազմավարական ներկայության՝ մշակութային և տնտեսական գերիշխանության հաստատման ճանապարհով, ինչպես և տարածաշրջանային տրանսպորտային և լոգիստիկ կապերով: Այս ընթացքում ծայրահեղ ազգայնական և իսլամական գաղափարները սկսեցին միաձուլվել Թուրքիայի ներքաղաքական դաշտում: Արդյունքում *«Կարմիր խնձորը»* վերածվեց պետական գերագույն նպատակի, որը խորհրդանշում էր երեք առանցքային ուղղություն՝ Արևմուտքից լիակատար անկախություն, ռազմաարդյունաբերական հզոր առաջընթաց և հավակնություն դառնալու ինքնուրույն ուժային բևեռ բազմաբևեռ աշխարհակարգում:

Այն հատուկ երանգ ստացավ հատկապես Ռ. Թ. Էրդողանի գլխավորած «Արդարություն և զարգացում կուսակցության» (ԱԶԿ) օրոք: Վերջին տասնամյակում հասկացությունը դադարել է լինել արմատական ընդդիմության կամ ծայրահեղ ազգայնական կուսակցությունների սեփականությունը և իր արտահայտություն է գտնում երկրի բարձրագույն ղեկավարության բառապաշարում՝ դառնալով ակտիվ և երբեմն ագրեսիվ արտաքին քաղաքականության գաղափարախոսական արդարացում: Հատկապես, Թուրքիայի ռազմական միջամտություններն ու գործողությունները Սիրիայում, Լիբիայում և Իրաքում, ինչպես նաև նրա ռազմատեխնիկական աջակցությունն Ադրբեջանին արցախյան հակամարտության ընթացքում, ներքին լսարանին ներկայացվում են հենց նվիրական *«Կարմիր խնձորին»* մոտենալու հատվածակողմով:

Որպեսզի վերն ասվածը մերկապարանոց չերևա, կարելի է հիշատակել մի քանի օրինակ: 2018 թ. ԹՀՈՒ կողմից Սիրիայի սուվերեն տարածքներն օկուպացնելու՝ «Ձիթենու ճյուղ» գործողության ժամանակ թուրքական հասարակության մեջ և սոցիալական ցանցերում լայնորեն տարածվեց *«Դեպի կարմիր խնձոր»* գնալու կարգախոսը: Այն մեծ տարածում գտավ այն բանից հետո, երբ լրագրողի այն հարցին, թե «*Ո՞ր ուղղությամբ եք շարժվում*», թուրք զինվորը պատասխանել էր՝ «*Կարմիր խնձորի*»[9]:

Դրվագն, անշուշտ, ակնառու կերպով ցույց է տալիս վերացական միֆի՝ զինվորական առօրյա ներթափանցման մասին: Փաստորեն, գաղափարախոսությունը դուրս է եկել քաղաքական բառամթերքից՝ *անհատական/զինվորի* և *ինստիտուցիոնալ/բանակի* մակարդակներում վերածվել է նվաճողական տրամադրությունների և շարժառիթի բնական բաղադրիչ: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ ժամանակակից թուրքական պետական մեքենան հաջողությամբ շահագործում է այս «սրբազան միֆը»՝ պահպանելու հանրային համախմբման բարձր մակարդակը, արդարացնելու իր նկրտումները և ձևավորելու այնպիսի հասարակություն, որը պատրաստ է աջակցել պետական սահմաններից դուրս ցանկացած նվաճողական գործողություն:

Ինչ վերաբերում է քաղաքական դեմքերի մակարդակով առասպելի տեսանկյունից հարցերին մոտենալուն, ապա նշենք, որ այս մասով բազմաթիվ հայտարարություններ են արվել: Օրինակ՝ 2017 թ. երիտասարդներին ուղղված իր ելույթում Էրդողանը հետևյալ ձևակերպումն էր արել. «*Մենք ձեզ հետ միասին կկառուցենք 2023 թվականի Թուրքիան»: Հաջորդ «կարմիր խնձորը» 2053 թվականի Թուրքիան է, որտեղ մենք ձեզ ենք վստահում ամեն ինչ: Նմանապես, դուք պատասխանատվություն եք կրում 2071 թվականի տեսլականը հաջորդ սերունդներին փոխանցելու համար*»[10]: Սիրիական գործողություններից երկու տարի

[9] Kahraman Mehmetçik Afrin'de: "Hedef Kızıl Elma", 18.05.2028, https://www.youtube.com/watch?v=tmvzzyegchg (բեռնման օրը՝ 15.07.2026).

[10] Stuart Williams. Turkey's Chase for the 'Red Apple'. *New Lines Magazine,* 15.01.2021, https://newlinesmag.com/essays/turkeys-chase-for-the-red-apple/ (բեռնման օրը՝ 18.07.2026).

անց և Արցախյան 2-րդ պատերազմից մեկ ամիս առաջ՝ 2020 թ. օգոստոսի 24-ին, այդ պահին երկրի նախագահին կից հաղորդակցության բաժնի ղեկավարի աթոռը զբաղեցնող Ֆահրեթին Ալթունը (2026 թ. մարտից ԹՀ դեսպանն է Վատիկանում), որին քաղաքական ընդդիմադիր ուժերը համեմատում են նացիստական Գերմանիայի քարոզչության նախարար Յ. Գեբելսի հետ՝ X-ի էջում կիսվել էր «Կարմիր խնձոր» հիմնով՝ ասելով. «*Մեզ համար «Կարմիր խնձորը» նշանակում է մեծ և ուժեղ Թուրքիա: Այն մեր ազգի սրբազան երթն է, որը պատմություն է կերտել Մանազկերտից մինչև հուլիսի 15-ը: «Կարմիր խնձորը» ստվերի տակ է պահում ճնշվածներին՝ թարմանալու համար: «Կարմիր խնձորն» այն է, ինչին ամբողջ մարդկությունը կարոտել է Ջիբրալթարից մինչև Հիջազ և Բալկաններից մինչև Ասիա*»[11]:

Սա «*Կարմիր խնձոր*» հասկացության թուրքական ներկայիս իշխանությունների և, անգամ, հասարակության նկրտումների խտացված արտահայտություն է: Ընդ որում, նկատենք, որ աշխարհագրական տեղանունների վրա շեշտադրված հայտարարության վերջաբանը բացահայտում է Անկարայի աշխարհաքաղաքական առավելագույն հավակնությունները:

Գալով Արցախի Հանրապետության դեմ թուրք-ադրբեջանական և նրանց սատարող ահաբեկչական խմբավորումների կողմից 2020 թ. սանձազերծված պատերազմին և արցախահայության նկատմամբ էթնիկ զտումների քաղաքականությանը, նշենք, որ թուրքական լրատվական մի շարք թերթերում և վերլուծական հաստատությունների հրապարակումներում այն ներկայացնում էին ևս մեկ «*Կարմիր խնձորին*» հասնելու քայլ[12]: Ահա այսպես է նկարագրում Արցախի բռնազավթումը Թուրքիայում հայտնի լրագրող, գրող, պետական մրցանակների արժանացած Ֆիլիզ Թոքլուն. «*Ղարաբաղը դարձել է ամբողջ թյուրքական աշխարհի «Կարմիր խնձորը», և «այս հին թյուրքական հայրենիքն ազատագրվել է օկուպացիայից» (**չակերտները հեղինակին է – Ա. Ս.**) և վերափոխվել թյուրք-իսլամական հողի: Եվ իմ երախտագիտությունն եմ հայտնում մեր պետական գործիչներին և ընկերներին, ովքեր քայլում են Թուրան-իսլամի ճանապարհով: …հավատում եմ, որ մենք կհասնենք այն օրվան, երբ մեր բոլոր օկուպացված հայրենիքները, ինչպիսիք են Ղրիմը և Արևելյան Թուրքեստանը, կազատագրվեն*»[13]:

---

[11] İletişim Başkanlığı Malazgirt Zaferi'nin 949. yıl dönümü dolayısıyla "Kızıl Elma" marşı hazırladı. *İletişim Başkanlığı,* 24.08.2020, https://www.iletisim.gov.tr/turkce/haberler/detay/iletisim-baskanligi-malazgirt-zaferinin-949-yildonumu- dolayisiyla-kizil-elma-marsi-hazirladi (բեռնման օրը՝ 18.07.2026).

[12] Տե՛ս, օրինակ, Bugün Türk'ün Kızılelması Karabağ'dır. *Çorum hakimiyet,* 05.10.2020, https://www.corumhakimiyet.net/bugun-turkun-kizilelmasi-karabagdir (բեռնման օրը՝ 18.07.2026). Şevval Beste Gökçelik. "Kızıl Elma" yı nasıl anlamalıyız? *Avrasya incemeleri merkezi,* 17.09.2021, https://avim.org.tr/tr/Yorum/KIZIL-ELMA-YI-NASIL-ANLAMALIYIZ (բեռնման օրը՝ 18.07.2026).

[13] Filiz Toklu. Kızılelma Durağı: Karabağ ve Karabağ çekik gözlü bir Türkmen kızı gibi. *Fısıltı haberleri,* 03.10.2023, https://www.fisiltihaberleri.com/yazi/kizilelma-duragi-karabag-ve-karabag-cekik-gozlu-bir-turkmen-kizi-gibi-hazarin-yakininda-mahzun-guzelligiyle-dedem-haci-muratin-destan-sehridir-cagrilsam-yollarina-dusebilirim-topragina-bayraklarla-girebilirim-karasevdalilar-g-1382.html (բեռնման օրը՝ 18.07.2026).

Հազարամյա հայկական քրիստոնեական քաղաքակրթության մի ամբողջ շերտի բնաջնջումը, ադրենաձին հայ բնակչության բռնի տեղահանումն Արցախի Հանրապետությունից և պատմական հիշողության պղծումն ահա այսպիսի միֆական պատումների միջոցով է հանրահռչակվում, և դա իսկապես իր ազդեցությունն է թողնում:

Այդ ազդեցությունն այսպես է նկարագրում թուրք պատմաբան, լրագրող Այշե Հուրը իր հեղինակած «Թուրքերի մյուս պատմությունը» խորագրով գրքի «Ի՞նչ է *«Կարմիր խնձորը»*, որտե՞ղ է այն» ենթագլխում. *«2010-ականներին ԱՀԿ-ի գլխավորած ազգայնական-սրբազան կոալիցիայի համար «Կարմիր խնձոր» են դառնում Լիբիան, Էգեյան կղզիները, Սիրիան և առնվազն Իրաքի հյուսիսը, և, անշուշտ, դարձյալ Կիպրոսը: Իսկ սոցիալական ցանցերի «կարմիր խնձորականներն» ավելի համարձակ են, անուն առ անուն թվարկում են նոր «Կարմիր խնձորները». «Թուրքիայի 82-րդ նահանգը՝ Մոսուլ, 83-րդը՝ Քիրքուկ, 84-րդը՝ Դամասկոս, 85-րդը՝ Մեքքա, 86-րդը՝ Երուսաղեմ...»: Նույնիսկ կան այնպիսիները, ում ականջները քանի դեռ չեն քաշել, ասում են՝ Մոսկվա, Պեկին: Իսկ վերջին «Կարմիր խնձորի» մասին լսեցինք հենց Էրդողանի բերանից. «Մեր նպատակը Շանհայի համագործակցության կազմակերպությանը լիարժեք անդամակցությունն է»: Անշուշտ, ենթատեքստում այն է, որ Ադրբեջանը Հայաստանից պոկի «Զանգեզուրի միջանցքը» և միացնի Թուրքիան՝ թյուրքական աշխարհին»*[14]:

Այս վերջին նախադասությունից ելնելով՝ նշենք, որ Արցախի հարցը *«լուծված համարելուց»* հետո, այժմ թուրքերի *«Կարմիր խնձորի»* կիզակետը Սյունյաց աշխարհն է, որի վերաբերյալ հոդվածներ են տարածում գտնում թուրքական մեդիա հարթակներով: Բնավ չցանկանալով մեջբերել դրանցում առաջ քաշված և խորը քննադատությանը չդիմացող թուրք-ադրբեջանական թեզերը[15,16], նշենք, որ դրանց հիմնական նպատակը պատմական կամ իրավական ճշմարտություն ներկայացնելն չէ, այլ, այսպես կոչված, *«Զանգեզուրի միջանցքի»* գաղափարի՝ որպես *«անխուսափելի իրողություն»* արմատավորելն է հանրային գիտակցությունում:

Այսպիսով, թուրք-ադրբեջանական տանդեմը, Սյունիքը դիտարկելով աշխարհագրական *«խոչընդոտ թյուրքական աշխարհի»* միավորման ճանապարհին՝ հոգեբանական, տեղեկատվական և դիվանագիտական ճնշման միջոցով փորձում է պարտադրել իր օրակարգը: Հատկապես տեղեկատվական գրոհներում շրջանառվում են տարածաշրջանի էթնիկ կազմի ձևափոխման, պատմական փաստերի խեղաթյուրման և

[14] Kuru Ağaç, Sidret'ül Münteha ve Kızıl Elma. *Kısa dalga,* 21.09.2022, https://kisadalga.net/yazar/kuru-agac-sidretul-munteha-kizil-elma_41938 (բեռնման օրը՝ 18.07.2026).

[15] Cemal Akkuş. Zengezur koridoru üzerındeki hegemonya mücadelesi ve Türkıye ve için stratejik çıkış yolları. *Alternatif Araştırmalar Merkezi (ALARM),* 15.08.2025, https://www.alternatifarastirmalar.org/kizil-elma-da-abd-dis-izi (բեռնման օրը՝ 23.07.2026).

[16] Mehmet Ali Çelebi. Kalkınma Yolu, Zap, Zengezur. *Yeni yaşam,* 16.01.2024, https://yeniyasamgazetesi9.com/kalkinma-yolu-zap-zengezur/ (բեռնման օրը՝ 23.07.2026).

«պատմական արդարության վերականգնման» կեղծ թեզերը, որոնք կոչված են քողարկելու իրական նկրտումները: Բնականաբար, այս գործընթացներն ուղղակիորեն սպառնում են ՀՀ ինքնիշխանությանն ու պետականության հիմքերին՝ *«Կարմիր խնձորի»* հերթական հանգրվանը դարձնելով հայոց ռազմավարական ամենախոցելի, բայց, միևնույն ժամանակ, ամենաառանցքային տարածքը: Իսկ սրանից հետևում է նաև այն, որ թուրք-ադրբեջանական տանդեմը փորձում է միջազգային հանրության աչքում հող նախապատրաստել ապագա պահանջների համար և Հայաստանի հասարակությունում սերմանել անօգնականության և հանձնվողականության տրամադրություններ: Այնպես, որ Արցախի կորուստը *«վերջնակետ»* չէր, այլ հաջորդ փուլի սկիզբ:

Եզրակացություններ

Եզրափակելով թեմայի հետ կապված մեր համեստ վերլուծությունը, ընդգծենք, որ *«Կարմիր խնձոր»* հորջորջվող, նվաճողական ենթատեքստ պարունակող այս հայեցակարգը՝ քարացած «ուսմունք» չէ: Այն, ինչպես տեսնում ենք, անընդհատ զարգացող և, միևնույն ժամանակ, հարմարվողական քաղաքական առասպել է, որը տարբեր դարերում, փոփոխվող անվտանգային միջավայրով պայմանավորված, ստացել է նոր բովանդակություն: Դրա հետ միասին, կախված պատմական պահի թելադրանքից՝ այն մե՛ր քողարկվում է անդրազգային էթնո-մշակութային ինտեգրացիոն (հիմնականում՝ պանթյուրքական) նախագծերի, մե՛ր՝ բարենպաստ աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում՝ ուղղակի տարածքային կամ ազդեցության սահմանների ընդլայնման նպատակների ներքո: Հետևաբար, *«Քըզըլ էլմայի»* տրամաբանությունը ենթադրում է նվաճման ենթակա կամ այդպիսի նպատակադրություն ունեցող նոր թիրախների մշտական ձևավորում, որտեղ յուրաքանչյուր նվաճված կամ յուրացված հանգրվան պարզապես ճանապարհ է հարթում հաջորդ, ավելի հավակնոտ նպատակի համար: Ըստ էության, գործ ունենք չափազանց ագրեսիվ, ռազմատենչ, հարևան ժողովուրդների ինքնիշխանության տարածքների հանդեպ նկրտումներ ունեցող մի գաղափարի հետ, որն անքակտելի է պաշտոնական Անկարայի քաղաքականությունից: